

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 747 էջ)

ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի վերջին տարիների կարևոր ձեռնարկումներից մեկը հայոց լեզվի ամբողջական պատմություն ստեղծելու մտահղացումն է, որն իրականացվելու է շուրջ չորս զրքով: Գրախոսվող աշխատությունն այդ շարքի առաջին գիրքն է, որ լույս է տեսել ակադեմիկոս Գ. Զահուկյանի հեղինակությամբ: Իր տեսակի մեջ եզակի, մեծարժեք ու սովորածավալ այս ուսումնասիրությունը ականավոր հայագետ-գիտնականի երկարամյա աշխատանքի փայլուն արդյունքն է: Նյութի ընդգրկման ծավալով, դասակարգման և բաշխման սկզբունքներով այն հիմնովին տարբերվում է հրապարակի վրա եղած հայոց լեզվի պատմության նվիրված հետազոտություններից և առաջին հերթին Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր ուսումնասիրությունից, որի մեջ հեղինակը պատմահամեմատական մեթոդով շարադրել է հայոց լեզվի բառապաշարի ծագման արանական դասակարգումը, բառային կազմի կրած փոփոխությունները: Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» փաստորեն յուրատեսակ ամփոփումն է փաստական այն հարուստ նյութի, որն ընդգրկված է նրա «Արմատական բառարանում»: Մինչդեռ հայոց լեզվի պատմությունը, որպես գիտակարգ, պետք է ներկայացնի հայոց լեզվի բոլոր տարատեսակների և բոլոր բաղադրիչների զարգացման պատկերը՝ ըստ ժամանակագրական շրջանների: Զահուկյանի այս աշխատության մեջ, ինչպես նշված է «Ինստիտուտի կողմից» համառոտ խոսքում, օգտագործված են բազմաթիվ նոր նյութեր ու աղբյուրներ, որոնք հայտնի չեն եղել հայագիտությանը և չեն արտացոլվել ինչպես Հր. Աճառյանի, այնպես էլ այլ հեղինակների՝ հայոց լեզվի պատմության ամբողջական ու մասնակի շարադրանքներում:

Մինչև օրս մենք չունենք հայոց լեզվի պատմությանը նվիրված այնպիսի ուսումնասիրություն, որն արտացոլի ժամանակակից լեզվաբանական գիտության մակարդակն ու հայագիտության վերջին շրջանի նվաճումները: Զահուկյանի «Հայոց լեզվի պատմությունը» այս բացը լրացնող հիմնարար աշխատություն է, որով հիմք է դրվում հայոց լեզվի պատմության գիտական ուսումնասիրության՝ ժամանակակից լեզվաբանական մակարդակով: Ավելացնենք, որ մինչև այս աշխատության հրապարակվելը հայոց լեզվի շրջաբաժանման և ժամանակագրական բաշխման սկզբունքները մշակվել էին անվանի գիտնականի՝ տասնամյակներ առաջ հրատարակված աշխատություններում [«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» (1956), «Очерки по истории дописменного периода армянского языка» (Ереван, 1967)]:

Զահուկյանի այս աշխատությունը նվիրված է հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանին, ի՞նչն է ստիպել գիտնականին մխրճվելու մեր լեզվի պատմության վաղընթացական ժամանակները: Հայոց լեզվի պատմությունը չի կարող տրվել առանց ցեղակից լեզուների տվյալների հաշվառման, առանց նկատի ունենալու մեր լեզվի նախնական վիճակը: Ելնելով այն առաջադրյալ գրույթից, որ մոտավորապես մ. թ. ա. III հազարամյակի սկզբներից հայերենն առանձնանում է հնդեվրոպական ընդհանրությունից և սկսում է իր գոյությունը որպես անկախ լեզու՝ հեղինակն իր քննությունն սփռում է հնագույն շրջաններից, բացահայտում հայերենի հարաբերակցությունը հնդեվրոպական բարբառների հետ և լեզվի տարբեր մակարդակներին վերաբերող հարուստ տվյալներով պարզում դրանց հնյունային, բառային ու բերականական աղբյուրները:

Գիրքը բաղկացած է ներածությունից և երեք ընդարձակ մասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձին գլուխներ ու ենթաբաժիններ: Աշխատության ներածական մասում հեղինակը քննում ու պարզաբանում է հայոց լեզվի պատմության, որպես առանձնական ու պատմական (տարածամասնակյա) (տերմինները հեղինակինն են—Ա. Մ.) գիտակարգի, առարկան, խնդիրներն ու նպատակները, հայոց լեզվի պատմության աղբյուրները, նրա կապը մյուս գիտակարգների հետ և բազմաթիվ այլ հարցեր, որոնց մեջ առանձնակի կարևորություն ունեն հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեթոդներն ու շրջաբաժանումները: Լեզվի պատմության ուսումնասիրության համար հեղինակն առաջադրում է հետազոտական բազմաթիվ մեթոդներ՝ 1. համեմատության, 2. վերականգնման, 3. տարածամասնակավորման, 4. հա-

մաժամանակավորման, 5. արտահարարերման և շարադրում է լեզվի պատմության քննության իր մշակած սկզբունքները, որոնք հիմնվում են լեզվի պատմական փաստերի ու լեզվի պատմության ընթացքի խոր ու ճշգրիտ վերլուծությունների վրա:

Միանգամայն ճիշտ ու տեղին է գիտնականի այն պնդումը, որ լեզվի պատմության շրջաններն առանձնացնելիս պետք է հաշվի առնել առաջին հերթին լեզվական տվյալները, լեզվական նորմերի այն էական փոփոխությունները, որոնք ընդգրկում են լեզվի բոլոր կողմերն ու մակարդակները (էջ 23): Նկատի ունենալով լեզվի գրավոր ու ոչ գրավոր վիճակների առանձնահատկությունները՝ հեղինակը լեզվի պատմությունը բաժանում է նախագրային (նախապատմական) և գրային (պատմական) ժամանակաշրջանների: Ելնելով այն դրույթից, որ լեզվի դարգացման շրջանների անցումները չոչափում են լեզվի բոլոր կողմերը, հեղինակը դրան համապատասխան առաջարկում է լեզվի շրջաբաժանումը կատարել ոչ թե մեկ հատկանիշով, այլ բազմահատկանիշ սկզբունքով՝ հենվելով լեզվի կառուցվածքի և բառապաշարի փոփոխությունների բոլոր հիմնական կողմերի վրա:

Հայոց լեզվի պատմության հանգուցային հարցերից մեկը լեզվի ճիշտ ու դիտակետորեն հիմնավորված շրջաբաժանումն է: Այս հարցում հեղինակն ունի հստակ ու որոշակի հայեցակետ: Հենվելով հին լեզուների (խեթերեն, հին հունարեն, հին հնդկերեն) տվյալների ու լեզվաժամանակադրական հաշվարկումների վրա՝ հեղինակը հայոց լեզվի անկախ դարգացումը տեսնում է մ. թ. ա. III հալարամյակի սկզբներից՝ առանձնացնելով երկու հիմնական շրջան՝ յուրենց ենթաշրջաններով. վաղնշական (մ. թ. ա. III հալ. սկզբից մինչև մ. թ. ա. XIII դ.), հնաշույն (մ. թ. ա. XII դ. մինչև մ. թ. ա. IV դ.):

Գրային ժամանակաշրջանը բաժանված է երեք շրջանների՝ հին (V—XI դդ.), միջին (XII—XVI դդ.) և նոր կամ աշխարհաբարի (XVII—XX դդ.):

Աշխատության առաջին մասը նվիրված է նախահայկական կամ բարբառային շրջանին: Հայոց լեզվի նախապատմությանը նվիրված մասը բաժանված է երկու հատվածի: Առաջինում քննվում են հնդեվրոպական լեզվի և հնդեվրոպացիների հետ կապված ընդհանուր հարցերը՝ հնդեվրոպական լեզուների դասակարգումն ու աշխարհագրական տարածումը, վերականգնված հնդեվրոպական լեզվի կառուցվածքը, բառապաշարը, դարգացման փուլերը, հնդեվրոպացիների նախահայրենիքը և բազմաթիվ այլ խնդիրներ (էջ 31—34):

Վիճահարույց հարցերից մեկն այն է՝ եղև՛ է արդյոք մեկ միասնական հնդեվրոպական լեզու, թե՛ հնդեվրոպացիները խոսել են իրարից անկախ բարբառներով: Մեր կարծիքով այս հարցում միանգամայն ճիշտ է հեղինակի մոտեցումը: Քանի որ միասնական հնդեվրոպական լեզվի հարցը գիտության կողմից վերջնական լուծում չի ստացել, ուստի այդ լեզվի վերականգնման փորձը որոշ պայմանականություն ունի, և կարելի է խոսել միայն հնդեվրոպական բարբառների համար ընդհանուր զգե՛րի մասին՝ առանց շեշտելու դրանց՝ մեկ ընդհանուր լեզվի պատկանելու վարկածը (էջ 36):

Հաջորդ հատվածներում աղբյուրագիտական տվյալներով հանգամանորեն քննվում են հնդեվրոպական հայագետների (Շմիդտ, Մելե, Պիդանի, Շպիտտ, Պորցիգ, Կրյոբեր և այլք) տեսակետները, որոնք օգնում են ընթերցողին կողմնորոշվելու հնդեվրոպաբանության բազմաթիվ կնճռոտ հարցերում:

Գրքում շոշափված կարևոր հարցերից մեկը, որ դարձյալ վեճերի տեղիք է տվել հնդեվրոպարան հայագետների մեջ, հնդեվրոպացիների ռեախաբանությունն է: Այս վիճահարույց խնդրին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը և իր կարծիքն արտահայտել է նախքան Գամկրելիձեի և Իվանովի գրքի՝ լույս ընծայումը, 1967 թ. հրատարակած ռեախաբանության հայոց լեզվի պատմության նախագրային շրջանի մասին (ռուսերեն) գրքում: Հայտնի է, որ Գամկրելիձեի ու Իվանովի այն կարծիքն են հայտնել, որ հնդեվրոպացիների ռեախաբանությունը պետք է փնտրել Առաջավոր Ասիայում: Ջահուկյանը նախնական շրջանի համար, երբ հնդեվրոպացիները նոր էին բաժանվում ընդհանրությունից, հավանական է համարում հնդեվրոպացիների՝ Ասիայում գտնվելու հանգամանքը:

Ինչպես հայտնի է, հայերենի՝ հնդեվրոպական լեզուների մեջ գրաված դիրքի հարցը առաջինը քննել է Հյուբշմանը: Հեղինակը ոչ միայն առանձին-առանձին քննում է հնդեվրոպարան հայագետների՝ այդ հարցի առթիվ արտահայտած տեսակետները (Հյուբշման, Կորրսաին, Ջուլաա և այլք) և հենվելով իր նախորդ աշխատությունների վրա՝ հիմնավոր վերլուծում-

1 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984.



ներով կատարում է բաղձաթիվ ճշգրտումներ, արտահայտում խնդրո առարկայի վերաբերյալ իր ուրույն մոտեցումներն ու փաստարկված տեսակետները, այլև լեզվական փաստերի և օգտագործված աղբյուրների բաղձակողմանի քննությամբ փորձում է որոշել հայերենի դիրքը հնդեվրոպական բարբառների մեջ, պարզում մյուս լեզուների ու բարբառների մերձավորության աստիճանը՝ ըստ հնչյունային, բառային ու քերականական առանձնահատկությունների (էջ 86—222)։ Առանձնակի գիտական արժեք ունի հեղինակի կազմած հավաստի բառացանկերի ընդարձակ աղյուսակը (էջ 11—156)։

Գրքի երկրորդ մասը նվիրված է հայոց լեզվի պատմության վաղնջական շրջանին, երբ հայերենը կազմավորվում էր որպես ինքնուրույն լեզու Իսկ այդ սկզբնավորման շրջանը, ըստ հեղինակի, տևում է մոտ երկու հազարամյակ։ Այս հատվածում սակավաթիվ լեզվական փաստերի ընձևում հնարավորություններով բացահայտվում են վաղնջական հայերենի հնչյունական ու քերականական որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև բառակազմական իրողություններ (վերջածանցում, նախածանցում, բարդություններ), հայերենի խոսվածքային ներքին տարբերություններ։ Այս ընդարձակ հատվածի երկրորդ մասում խոսվում է վաղնջական հայերենի բառապաշարի հիմնաշերտի մասին, բնութագրվում են բառապաշարի իմաստային խմբերը։ Հետաքրքիր են վաղնջահայերենի՝ այլ լեզուների (հունարենի, ասորերենի) մաղ շրջանների հետ ունեցած առնչությունների մեկնաբանությունները։

Աշխատության վերջին՝ երրորդ, մասը նվիրված է հայոց լեզվի հնագույն շրջանին, այսինքն, նախագրային փուլի քննությանը (անցումը վաղնջահայերենից գրաբարին)։ Նկատի ունենալով լեզվական փաստերի առատությունը և հիմնավոր տվյալները՝ հեղինակը այդ շրջանի քննությունը կատարում է ոչ թե ըստ հնթաշրջանների, այլ ըստ լեզվական կառուցվածքի՝ ու բառապաշարի տարբեր կողմերի հաշվառման՝ լանտեսելով, իհարկե, ժամանակագրական նշանները։ Հիմք ընդունելով վաղնջահայերենի իր իսկ կատարած հիմնավոր վերլուծումները՝ հեղինակը համոզել ու հավաստի փաստարկություններով ներկայացնում է հնագույն հայերենի լեզվական պատկերը, այդ շրջանի լեզվի առանձնահատկությունները ըստ լեզվի տարբեր կողմերի՝ հնչյունային, ձևաբանական, շարահյուսական, բառային։ Գիտնականի գիտարկումներն ու նմուտ վերլուծությունները ամուր հիմք են ստեղծում հետագա շրջանի լեզվի (գրաբարի) շատ իրողություններ բացահայտելու համար։ Այսպես, օրինակ, հեղինակի պնդումով վաղնջահայերենի՝ հնդեվրոպականից եկող քանակային տարբերություններն աստիճանաբար վերացել են, և հայերենը դադարել է երկար ու կարճ ձայնավորների հնչյունային հակադրություն ունենալուց։

Տարբեր հատվածներում համոզիչ փաստարկումներով ներկայացվում է հնագույն հայերենի հնչյունական կառուցվածքի պատկերը, տրվում են բառակազմական կաղապարները, հնագույն բարդությունները, վիպասանական հայերենի լեզվական առանձնահատկությունները, ինչ հայերենի բարբառային տարատեսակների կառուցվածքային ու բառապաշարային նկարագիրը։

Հիմնականում ընդունելով Հր. Աճառյանի կարծիքը բնիկ հայերեն լեզուների՝ հնագույն շրջանում ունեցած գերակշռության մասին, հեղինակը ելնում է հայագիտության վերջին շրջանի նվաճումներից և կատարում բաղձաթիվ ճշգրտումներ, անում արժևոյնոր գիտողություններ (էջ 382—384)։

Այս գրքում հարուստ փաստերով են ներկայացված հնագույն հայերենի առնչակցությունները խուռերենի, սեմական լեզուների, իրաներենի, հունարենի և այլ լեզուների հետ, տրված են դրանց շփումներն ու փոխադրությունները, այլ լեզուներից կատարված փոխառությունները։ Այս հատվածներում ևս, օգտագործելով Աճառյանի կազմած բառացանկերը, հեղինակը կատարում է բաղձաթիվ հավելումներ ու ճշգրտումներ։

Գրախոսվող աշխատությունը ընդգրկված հարցերի բաղձակողմանիությամբ, պատկանական փաստական նյութի հարստությամբ, լեզվական փաստերի խորքային քննությամբ, հավաստիության հասնող վերլուծումներով և հատկապես նյութի բաշխման ու շարադրման նոր սկզբունքներով հայոց լեզվի պատմությանը նվիրված կոթողային մի ուսումնասիրություն է, որի մեջ լավագույնս զրոսեորվել են գիտնականի խոր իմացությունը, մտքի լայնախոհությունը։ Այն, անշուշտ, հայագիտության վերջին տարիների ամենալուրջ նվաճումներից է։

Ա. Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Բաճախիբական գիտությունների բնիկություն